

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ ազգն, իրեն դարաւոր ցաւերուն մէջ, ունեցեր է թերես շատ սփոփիչներ. բայց ոչ միոյն գործն եղած է այնչափ վեկարար, այնչափ տևող, որչափ այն մեծ Սեբաստացւոյն, որ անուան հետ՝ գործով ալ եղաւ Մխիթար; Ամբողջ երկու հարիւր տարիներ անցան այն օրէն ի վեր, յորում նա հիմք գրաւ՝ Կ. Պոլոսյ մէջ՝ իրեն անունը կրող հաստատութեան, որը յետոյ բարձրացուց Մեթոնի մէջ, և վերջը՝ Վենետիկոյ Սուրբ Ղազարու կղզեկին մէջ՝ հրաշակերտեց զայն: Ինքն Մխիթար գծեց այդ հաստատութեան ուղղութիւնը, որով պիտի գիմէր իրեն նպատակին, այն է՝ մտաւոր և բարօյական վերականգնումն և զարդացումն ազգին, և որուն համար չի խնայեց ինքն ո՛ւ և է ճիգն և զոհողութիւն: Ո՞վ չգիտեր՝ թէ այդ երկար շրջանին՝ ո՞չչափ գիտարութիւնք և խոշընդակներ ընդ առաջ ելան Մխիթարայ կանգնած Մխաբանութեան, որոնք սակայն չի կրցան կատեցնել կամ խոսութեցնել զայն իրեն ուղղութենէն: Ո՞վ չգիտեր թէ նա՝ իրեն Հիմնադրին ոգւով ներշնչուած՝ ո՞րքան գրական և կրթական ծառայութիւններ մատոյց ազգին, մեծ գրադէտներ և գործիչներ ընծայելով անոր, և ուհանորդ հանդիսանալով լուսաւոր յառաջադիմութեան մը, որուն նշյլները ազգիս ամենէն աւելի հեռաւոր և նոյն խոկ իրենց ազգայնութիւնը մոռացող խաւերուն մէջ թափանցեցին: Հա՞րեւ է ըսել՝ թէ ինքն եղաւ որ Խւրոպացւոց ծանօթացոյց հայ ազգը, իրեն ազնուադոյն տիպարին մէջ, իրեն հին ճոխ գրականութեամբը և գարուս նորանոր արուեստից և գիտութեանց ձկտող մտքովը, և որոնց մէջ գրեթէ արևմտեայց հաւասարաքայլ կընթանայ:

Արդ, գալ տարի, 1901-ի Սեպտեմբերի 8-ին (ըստ Ն. Տի), լրանալով ճիշդ Մխաբանութեան հիմնարկութեան Երկարութիւնը շրջանը, անհրաժեշտ պարտք կը համարինք աօնել Հիմնադրիս Մխիթարայ և ազգիս բարեբարին յիշատակը, որուն մեծութեան համեմատ՝ տակաւին արժանաւոր պատկ մը, պարտուպատշաճ յարգանք մը ընծայուած չէ: Յատկապէս այս առթիւլոյս պիտի տեսնեն Մխաբանութեանս տպարանէն հետևեալ գործերը:

10. ՀԱՅԱՊԱՏՈՒՄ գիրք, որ է Հ. Պ. Ալիշանի հաւաքած Հատուածք պատմութեանց մեր հեղինակաց, ժամանակագրական կարգաւ, մինչև յժի դար. համառօտ աշխարհաբար ծանօթութեամբք:

20. Լիակատար կենսագրութիւն Մխիթարայ Աբբահօր, պատկերազարդ:

30. Մխիթարեան Մխաբանութեան 200 ամեայ գործունէութիւնն և նշանաւոր գործիւնները, նոյնպէս պատկերազարդ:

40 Համառօտ պատմութիւն Մխիթարայ վարուց և գործերուն, նոյն հանդիսին առթիւ ձրիւաբալ բաշխելի:

50. Մխիթարայ և իրեն Մխաբանութեան գործունէութեան պատմութիւնը, գաղղիերէն լեզուով:

60. Պատմութիւն վարուց Մխիթարայ Աբբահաւալ. լեզուաւ:

70. Հատք ի բանից Մխիթարայ ծառային Աստուծոյ, քաղուած իրեն տպուած և անտիպ գրութիւններէն. նոյնն անդղիերէն:

80. Պատկերազարդ մեծագիր թերթ մը, կատարուելիք հանդիսին պատկանող. և այն:

Դարձեալ փափագելի է մեզ, թէ և մեր կարողութենէն վեր, ուղիւշ մնայուն կոթողով մալ յաւերֆացնել մեծ Սեբաստացւոյն յիշատակը, որուն վրայ կարգան հաւասարապէս գրագէտք և ոչ գրագէտք, ազգայինք և օտարք, ներկայք և ապագայք, որ վայեցնէ՝ ոչ լոկ Մխիթարայ մեծութիւնը կամ հանճարը, այլ այն ցեղին՝ որ կրցաւ—և կրնայ նոյնպիսի պարագայից մէջ — այսպիսի մեծ ծնունդներ յառաջ բերել:

Աստարակոյս ազգայնոց ազնիւ զգացումները վիթաւորած պիտի լինէինք, եթէ ներքին անձուկ շրջանակի մը մէջ ամփոփելով սոյն հանգէսը, զուտ վանական նկարագիր մը տայինք անոր և ոչ ազգային, մինչդեռ ամէն հայ՝ մեզի հաւասար՝ կրաւունք ունի իրենն ըսելու զՄխիթար և անով պարձելու: Ուստի այսու կը ծանուցաններ հայ հասարակութեան մեր գիտումները և ծրագիրը, որպէս զի անոնք որ կը փայլագին՝ կարենան մասնակցիլ հանդիսիս և միշոցներ հայթայցնել, որով ըստ կարելոյն աւելի հանդիսապէս և արժանաւոր կերպով կատարուել յիշատակը այն մեծ մարդուն, որ Խւրոպացւոց անդամ հիացման և յարգանաց առարկայ դարձեր է: Որոնք որ կը ցանկան այս մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ կամ ո՛ւ է կերպով աջակցել, կարող են ուղղուել այն Յանձնագողովոյն, որ յատկապէս սոյն հանդիսին համար կազմուած է, և որուն հասցէն է

La Commission pour les fêtes
Jubilaires deux-centenaires
VENISE (Italie) — S. LAZARE

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ,
ՅՈՒԲԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՍԻՍ
ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

